

ՀՆԱԶԱՆԴՈՒԹԻՒՆ

Ուստի երբ միտքը, տեսնելով իր անձին օգուտը, կը յորդորէ կամքին ուրիշի կամքին հնազանդիլ եւ այնուհետեւ ան ոչ թէ ուրիշին կամքին հնազանդիլ է այլ սեփական եւ կարծես մարդը ինքն իրեն ազատաբար կը հնազանդուի: Ուրեմն ով որ ազատ կարողութեամբ կ'ենթարկէ իր կամքը ուրիշի կամքին, որ իր սեփական կամքը դարձուած է ոչ թէ իր անձնիշխանութիւնը կը կորսնցնէ, այլ առաւել կը հաստատէ:

Աստուծոյ կամքին հնազանդիլը բնական է բոլոր արարածներուն: Քանի որ բնութեան հեղինակը Աստուած է, ուստի բոլոր արարածները հնազանդ են Աստուծոյ յաւիտենական անփոփոխ օրէնքին, իսկ Աստուծոյ օրէնքին հնազանդիլը Աստուծային կամքին հնազանդիլն է, որովհետեւ օրէնքը կամքի կողմէ հաստատուած է:

Արդ, Աստուծային օրէնքը հաստատուն ու անեղծանելի մնալու համար, տպուեցաւ մարդու մտքին մէջ եւ կը կոչուի բնական օրէնք, կամ գրի առնուեցաւ աստուածային յայտնութեամբ եւ կը կոչուի գրաւոր կամ շնորհական օրէնք: Օրինագէտներ կամ անոնք, որոնց յայտնուած է օրէնքի պաշտպանութիւնը, ջանք կը թափեն ամէն օր հրատարակել անոնք ամենուն եւ լսողները պարտաւոր են հնազանդիլ անոնց եւ փութալ կատարելու...

Հարունակելի

ԿՐՕՆԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

ՈՂԻՆԵՐԸ, ԳԵԻԵՐԸ, ՉԱՐ ՈՒԺԵՐԸ՝ ՀՈԳԵՒՈՐ ԳԻՏԱՆԿԻՒՆԷՆ

ԿԱՆԱՐԳՈՒԹԵԱՆ ՀԵՏԵԱՆՔՆԵՐ

Կախարդութեան հետեւանքները կրնան ալլազան ըլլալ: Ստորեւ կ'ուզեմ ընթերցողին տեղեկացնել, թէ ինչ կ'ըսեն անոնցմով անձամբ զբաղողները:

ՎԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ

«Կախարդութեամբ Սատանային սարսափելի իշխանութեան տակ ինչպէս: Հիմա կը տանջուիմ Ֆիզիքապէս ու հոգեպէս: Որքա՛ն կ'ուզեմ ազատիլ: Անսահմանօրէն դժբախտ եմ: Աղօթելու համար ուժ չունիմ, հոգիս մէջ խաւար գիշեր է: Ես սիրով պիտի դիմէի Աստուծոյ՝ մեր Փրկչին: Առանց Անոր՝ կեանքս հիմա սարսափելի է եւ ունայն...»: Յետոյ այս խեղճ հոգին կը խնդրէ աղօթել իրեն համար, որպէսզի կարենայ ազատիլ այդ «բանտ»էն:

Ուրիշ պարագայ մը կը գրէ. «Ինչ որ կը կարգամ Աստուածաշունչին մէջ՝ անմիջապէս կը մոռնամ: Եկեղեցոյ մէջ խօսուածն ալ ազդեցութիւն չ'ըներ իմ վրաս, շատ քիչ բան կը յիշեմ: Բայց շատ կ'ուզեմ ամէն ինչ յիշել եւ ամրացնել սրտիս մէջ: Օ՛, ինչքան յաճախ կ'ուզեմ ետ բերել մանուկ օրերուս հաւատքը: Ինչո՞ւ չեմ յաջողիր: Որովհետեւ անցեալին հմայողներու դիմած եմ եւ անձամբ ալ հմայութեամբ զբաղած»...:

Շարունակելի

ՉԱՍՅԷ.

ՃՐԱԳ ԾԱԲԱԹԱԹԵՐԹ - ԱԶԳԱՅԻՆ ԱՈՍՁՆՈՐԴԱՐԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ -
Bourj-Hammoud, P.O.Box 80810 - Tel/Fax: 01-258300 - E-mail: jerak@live.com



ԱԶԳԱՅԻՆ ԱՈՍՁՆՈՐԴԱՐԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ



ԵՈՒ ԽՕՍԵԳ ԽՄ ՈՏԲԵՈՒՄ ԵՐԱԳ Է ՈՒ ԽՄ ՇԱԽԴԱՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ (Ս., 119-105)

Ե. ՏԱՐԻ

ԿՐՈՒԿԻ՝ 13 ՄԱՅԻՍ, 2012

ԹԻՒ 20

ՅԻՍՈՒ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻՏՏԱՐԱՆԸ
ՈՍՏ ՅՈՎՅԱՆՆԷՍԻ
9.39- -10.10

Յիսուս ըսաւ. «Աշխարհ եկայ յայտնելու, թէ որո՞նք են կոյրերը եւ որոնք՝ տեսողները. որպէսզի կոյրերը տեսնեն եւ անոնք որ կը տեսնեն՝ կուրնան»

Փարիսեցիներէն ոմանք որոնք իր շուրջն էին, լսեցին ասիկա եւ հարցուցին. «Արդեօք մե՞նք ալ կոյր ենք»:

Յիսուս անոնց պատասխանեց. «Եթէ կոյր ըլլայիք, մեղք պիտի չունենայիք. բայց բանի կ'ըսէք թէ կը տեսնէք, կը նշանակէ՝ թէ ձեր մեղաւոր ըլլալը կը հաստատէք: Հաստատ գիտցէ՛ք, ան որ ոչխարներուն փարախը դռնէն չի մտներ, այլ ուրիշ տեղէ կը մագլցի, անիկա գոյ է եւ աւագակ. իսկ ան, որ դռնէն կը մտնէ՝ անիկա ոչխարներուն հովիւն է: Դոնապանը դուռը կը բանայ անոր եւ ոչխարները իր ձայնին կը հետեւին: Իրենց անուններով կը կանչէ իր ոչխարները եւ դուրս կը տանի զանոնք: Եւ երբ իր ոչխարները դուրս կը հանէ, ի՞նք կ'առաջնորդէ եւ ոչխարները կը հետեւին իրեն, որովհետեւ իր ձայնը կը նանչնան: Օտարին չեն հետեւիր. ընդհակառակը, կը փախչին անկէ, որովհետեւ օտարներու ձայնը չեն նանչնար»:

Յիսուս այս առակը խօսեցաւ անոնց, սակայն անոնք չհասկցան թէ ի՞նչ ըսել կ'ուզէր իրենց: Ուստի Յիսուս կրկին ըսաւ անոնց. «Հաստատ գիտցէ՛ք, թէ ե՛ս եմ ոչխարներուն դուռը: Բոլոր անոնք, որոնք ինձմէ առաջ եկան, գոյ էին եւ աւագակ. բայց ոչխարները անոնց չհետեւեցան: Ես եմ դուռը. ով որ ինձմէ անցնելով ներս մտնէ՝ պիտի փրկուի. պիտի մտնէ եւ իլլէ եւ նարակ գտնէ: Գողը կու գայ միայն գողնալու, սպաննելու եւ փնացնելու համար: Ես եկայ՝ որպէսզի կեանք ունենան եւ լսեցուն կեանք ունենան»:

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ

ՀԱՐՑՈՒՄ ՊԱՏԱՍԽԱՆ ԲԱԺԻՆ

ՃԱՆՉՆԱՆՔ ՄԵՐ ԵԿԵՂԵՑԻՆ

ՀՈԳԵՒՈՐ ԽՈՐՀՐԳԱՏՈՒ

ՃՇՄԱՐԻՏ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆԸ

Քրիստոս իր հրաշափառ յարու-
թենէն 40 օր ետք երեւցաւ իր աշա-
կերտներուն՝ անոնց հետ խօսելով
Աստուծոյ արքայութեան մասին:

Քառասուններորդ օրը Յիսուս
պատուիրեց աշակերտներուն Երու-
սաղէմ մնալ մինչեւ Պենտեկոստէի օ-
րը, երբ Ս. Հոգին պիտի իջնէ երկին-
քէն եւ բնակի անոնց մէջ:

Այնուհետեւ իր աշակերտներուն
հետ Քրիստոս Ձիթենեաց լեռը բարձ-
րացաւ, ուր օրհնեց զանոնք: Եւ երբ
կ'օրհնէր երկինք բարձրացաւ բոլո-
րին աչքին առջեւ: Երբ տակաւին ա-
ռաքեալները իրենց աչքերը երկինք
յարած՝ Յիսուսի մեկնելը կը դիտէին,
ահա երկու սպիտակագգեստ մար-
դիկ երեւցան անոնց եւ ըսին.

—Ո՛վ Գալիլիացիներ, ինչո՞ւ կեցեր
երկինքը կը դիտէք: Այս Յիսուսը որ
երկինք համբարձաւ, օր մը դարձեալ
պիտի գայ այնպէս՝ ինչպէս անոր եր-
կինք երթալը տեսաք:

Քրիստոս համբարձաւ, որպէսզի
երկինքը երկրին միաւորէ եւ աստ-
ւածացնէ ու փառաւորէ մարդկային
բնութիւնը:

Ան երկինք ելաւ եւ նստաւ Հօրը
աջ կողմը առանց լքելու իր սիրելի ա-
ռաքեալները եւ բոլոր անոնք, որոնք
կը հաւատան եւ կը սիրեն զինք:

Յիսուս ըսաւ.

**«Ես ձեզի հետ եմ, մինչեւ
աշխարհի վերջը»:**

Ի՞նչ է ՄՈՄԱՎԱՌՈՒԹԻՒՆ

Եկեղեցւոյ մէջ մոմ վառելը շատ
հին սովորութիւն է: Անշուշտ, հին Ժա-
մանակներուն, մոմի գործածութիւնը
անհրաժեշտ էր լուսաւորութեան հա-
մար, մանաւանդ երբ արարողութիւնը
տեղի կ'ունենային գիշերները: Ժամա-
նակի ընթացքին երբ մոմի լոյսը փո-
խարինուեցաւ ճրագներով եւ ապա ե-
լեկտրականութեամբ, մոմի գործա-
ծութիւնը մնաց:

Սուրբերու նկարներուն առջեւ
մոմ վառելը զոհ մատուցանելու ի-
մաստ ունի: Ժամանակին, Հին կտա-
կարանին մէջ, մարդիկ իրենց մեղքերը
քաւելու համար Աստուծոյ կենդանի
զոհ կը մատուցանէին, զոհին արիւնը
հեղելով: Քրիստոնէական շրջանին հա-
ւատացեալներ զոհ մատուցանելէ
ղաղբեցան, որովհետեւ Քրիստոս ինք
եղաւ միակ եւ գլխաւոր Չոհը, որ խա-
չին վրայ զոհուեցաւ եւ իր արիւնը հե-
ղեց մարդոց մեղքերուն համար եւ Ս.
Պատարագը յիշատակումն է խաչի վը-
րայ Քրիստոսի զոհագործուելուն:

Ներկայիս, մոմը կը խորհրդանշէ
անարիւն եւ բանաւոր զոհ, փոխան
հին կտակարանի կենդանական
արեան հեղմամբ զոհերուն:

ՈՍԿԵՂԵՆ ՀԱՄԱՐ

Նոյնիսկ երբ բարկանաք՝ չըլլա՛յ որ
մեղանչէք. եւ բարկացած չմնաք մինչեւ
իրիկուն: (Եփեսացից 4.26):

ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԾԻՍԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ

ԱԻԱԶԱՆ

Աւագանը մկրտութեան ծառայող
եւ խորունկցած տաշտածեւ քարն մը,
որուն մէջ ջուր կը լեցուի եւ երեսան
անոր մէջ կը մտցուի՝ մկրտութեան
խորհուրդը կատարելու համար: Աւա-
գանները եկեղեցիներուն մէջ հաստա-
տուն պիտի ըլլան, աջակողմեան պա-
հարանին հիւսիսային պատին առջեւ,
ամրացուած, մինչեւ մարդուն մէջքը
հասնելու բարձրութեամբ, եւ ապահո-
վութեան համար յատուկ դարանի նը-
ման գոց դիրքի մէջ առնուած ու փակ-
ւած: Աւագանը յատուկ օծման արա-
րողութիւն ունի եկեղեցւոյ ընդհանուր
օծման մէջ, հին տեղէն կ'օծուի. ներ-
քին կողմէն չորս անկիւններն ու մէջ-
տեղը: Աւագանին նկատմամբ պէտք է
դիտել՝ որ բաւական ընդարձակ եւ
բաւական խորունկ ըլլայ, եւ այնչափ
ջուր կարենայ պարունակել, որ երա-
խային ջուրին մէջ մտած ատեն՝ ամ-
բողջ մարմինը կարենայ ծածկել, եւ ոչ
թէ լոկ թիկունքն ու քամակը թրջել:
Հետեւաբար ծիսական կատարելու-
թիւն չունին այն աւագանները որոնց
երկայնութիւնը կարճ է ու խորու-
թիւնը քիչ:

«Զօրացիր ու քա՛ջ եղիր: Մի՛ վախնար
բնաւ եւ մի՛ վարանիր, որովհետեւ ես՝
քու Տէր Աստուածդ, քու հետդ եմ ո՛ւր
որ ալ երթաս»: (Յեսու 1.9)

Մեծ մրցանակ մը խոստացուած
էր այն նկարիչին, որ լաւագոյն կեր-
պով պիտի ներկայացնէր խաղաղու-
թիւնը իր նկարով: Բոլոր մրցողնե-
րուն մէջէն միայն երկու անձերու
նկարները ընտրուեցան: Մէկը կը
պարզէր դաշտային պատկեր մը ա-
մառուայ ընթացքին: Առուակը
անաղմուկ կը հոսէր կանաչ մարգա-
գետիններուն մէջէն, արծաթի լայն
ժապաւէնի մը նման: Ժայռերը կեցած
էին տարածուն ու հանդարտ: Հօտը
կ'արածէր հսկայ կաղնիի մը գով շու-
քին տակ: Հրաշագեղ թեւերով թի-
թեռնիկները կը հանգչէին գոյնզգոյն
վարդերու եւ ծաղիկներու վրայ, թռ-
չունները թառած էին ծառերուն ճիւ-
ղերուն ու կ'երգէին: Կապոյտ երկնա-
կամարը կը հովանաւորէր ամէն ինչ:
Այս էր ան ահա մէկուն նկարած «խաղա-
ղութիւնը»:

Սակայն մրցանակը տրուեցաւ այն
նկարիչին, որ իր պաստառին վրայ կը
պարզէր սաստիկ ալեկոծ ովկիանոս
մը, որուն ալիքները կատաղօրէն կը
զարնուէին եզերքի ժայռերուն ու կը
փշրուէին: Մութ էր երկինքը ու ամ-
պամած: Կայծակը կ'այրէր ամպե-
րուն սիրտը: Սակայն մօտակայ բար-
ձր ժայռի մը կողքին, խոռոչի մը մէջ
բոյն մը կար, ուր թռչուն մը կը
հանգչէր իր ձագերուն վրայ: Փրփ-
րողէզ, կատաղի ալիքները զայրոյ-
թով կը բախէին ժայռին, սակայն
թռչունը որեւէ վախի նշան ցոյց չէր
տար եւ կատարեալ խաղաղութեան
մէջ հանդարտութեամբ կը դիտէր այս
բոլորը, որովհետեւ գիտէր թէ այն ա-
պառաժը որուն վրայ կը հանգչէր ա-
մուր էր ու ապահով:

Քրիստոս է հաւատացեալին միակ
ապաստանարանը, ուր հանգչելով ան
կրնայ դիտել կեանքի բոլոր վտանգ-
ները՝ լման խաղաղութեան մէջ եւ
առանց վախի:

**ԱՌԱՔԵԱԼՆԵՐՈՒ ԳՈՐԾԵՐԸ
20.17-38**

Միլետոսէն Պօղոս յուր դրկեց եփեսոս
եւ եկեղեցոյ երեցնեբրը իր բովր կանչեց:
Երբ անոնք եկան, ըսաւ անոնց. «Դուք
անձամբ գիտեք թէ Ասիա գալուս ա-
ռաջին օրէն ի վեր ի՛նչպէս վարուեցայ
ձեզի հետ, ամբողջ այս ժամանակա-
միջոցին: Ամենայն խոնարհութեամբ եւ
յանախ արցունքով ծառայեցի Աստու-
ծոյ, հրեաներու նիւթած բոլոր փորձու-
թիւնները կրելով: Գիտեք թէ բնաւ չճաշ-
ւեցայ ձեզմէ, օգտակար բաներու մասին
խօսեցայ եւ սորվեցուցի ձեզի, հրապա-
րակաւ ըլլայ թէ տան մէջ: Թէ՛
հրեաներուն եւ թէ՛ հեթանոսներուն տուի
նոյն վկայութիւնը եւ պատգամը՝ ա-
պաշխարութեամբ Աստուծոյ դառնալու
եւ մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի հա-
ւատալու:

Հիմա ահաւասիկ Սուրբ Հոգիին
մղումով Երուսաղէմ կ'երթամ: Չեմ
գիտեր թէ հոն ի՛նչ պիտի պատահի ինծի:
Միայն գիտեմ թէ ամէն մէկ քաղաքի մէջ
Սուրբ Հոգին կ'ազդարարէ ինծի՝ ըսելով
թէ բանտարկութիւն եւ նեղութիւն կը
սպասեն ինծի: Բայց հոգս չէ. ինծի
համար կարեւորը կեանքս չէ, այլ կ'ուզեմ
ուրախութեամբ իր վախճանին հասցնել
սկսած գործս, այն պաշտօնը որ Տէր
Յիսուս տուաւ ինծի՝ Աստուծոյ շնորհքը
աւետարանելու:

**ՅՈԿՅԱՆՆԵՍ ԱՌԱՔԵԱԼԻ
ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ
ԱՌԱՋԻՆ ՆԱՄԱԿԸ
3.1-6**

Տեսէք թէ ի՛նչպիսի սիրով Հայրը
մեզ սիրեց, ուզելով որ Աստուծոյ
որդիներ կոչուինք, եւ արդարեւ
Աստուծոյ որդիներն ենք: Աշխարհը
մեզ չի ճանչնար, որովհետեւ
չճանչցաւ զայն:

Սիրելիներ, այժմ Աստուծոյ որ-
դիներ ենք: Թէ՛ ի՛նչպէս պիտի ըլլանք
յետոյ՝ չենք գիտեր տակաւին. բայց
գիտենք թէ երբ Քրիստոս յայտնուի
իրեն նման պիտի ըլլանք, որովհետեւ
զինք պիտի տեսնենք իր իսկութեան
մէջ: Ով որ այս յոյսը ունի՝ ինքզինք
կը մաքրէ, ինչպէս որ Քրիստոս ինք
մաքուր է:

Ով որ կը մեղանչէ՝ Աստուծոյ
օրէնքը կը խախտէ, եւ մեղքը ինքնին
օրէնքին խախտումն է: Գիտէք թէ
Քրիստոս յայտնուեցաւ մեր մեղքերը
ջնջելու համար, եւ թէ իր մէջ մեղք
չկայ: Ով որ Քրիստոսի միացած կը
մնայ՝ չի մեղանչեր. իսկ ով որ կը
մեղանչէ՝ զայն երբեք տեսած ու
ճանչցած չէ:

**ՀԱՐՈՒՆԱԿԵԼ
ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆԸ
ԱՍՏՈՒՄՕՄԱՀՈՒՄՆԻՆ: ՄԻՇՏ
ԱՍՏՈՒՄՕՄԱՀՈՒՄՆՉ ԿԱՐԴԱՆՔ:**